Հավելված 2
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ՇՃ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 3

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «18 տարին լրացած անձանց ցերեկային կենտրոններում խնամքի և սննդի տրամադրման ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 18. Շիրակի մարզ – ճաշարան |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2023-31.12.2023թթ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2023 - 30.09.2023թթ. |
| **Ներկայացման օր** | 09.10.2023թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN YERVAND
2508730335
Date: 2023.10.09
16:18:34 AMT

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում Շիրակի մարզի Արթիկ և Գյումրի համայնքներում գործող ճաշարաններում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրվել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով 8 շահառու ուղղորդվել է այլ կառույցներ /իրականացվել է թվով 9 ուղղորդում/:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - շփման և զբաղվածության կարիք ունեցող շահառուները բավականին երկար են մնում կենտրոնում, շփվում միմյանց հետ, ըստ հետաքրքրությունների ձևավորում խմբակներ: Հաշվետու ժամանակահատվածում Շիրակի մարզի երկու համայքների ճաշարանների 48 շահառուներ իրենց առօրյան անցկացրել են նմանատիպ խմբակներում (գեղարվեստ, ձեռագործ, առողջ ապրելակերպ, մամուլի ընթերցում, գրական):

- ճաշարանի շահառուների համար կազմակերպվել են միջոցառումներ (ՀՀ Սահմանադրության օր, Վարդավառի տոն, Հոբելյանների նշում, Խաղողօրհնեք, Հայկական կենացները, Խաչվերացի տոն, Անկախության տոն), որոնց մասնակցել է թվով 57 շահառու:
- Հաշվետու ժամանակահատվածում Գյումրու 2 շահառու օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում Գյումրու կենտրոնի ֆեյսբուքյան էջում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Ծննդյան տոնի նշում (տե՛ս հետևյալ հղումով՝ http://surl.li/klfez),
- Հայ գրողներն ու նրանց ստեղծագործությունները (տե՛ս հետևյալ հղումով՝ http://surl.li/jpwoe):

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**
**Հաշվետու ժամանակահատվածում.**

Գյումրու բարեգործական ճաշարանի սոցիալական աշխատողը մասնակցել է.

- ՕքսՖեՋեն հիմնադրամի և Սոլիդարիթի Սենթեր հայաստանյան մասնաճյուղի կողմից կազմակերպված «Կանանց աշխատանքային

իրավունքների խթանումը տեղական մակարդակում» խորագրով սեմինար-քննարկմանը,

- Գյումրու ՄՍԾ-ի տարածքային կենտրոնին կից հասարակական հիմունքներով գործող տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի նիստերին, որի ընթացքում բարձրացվում են նաև շահառուներին հուզող տարաբնույթ հարցեր:
- Գյումրու Ն. Մելիքյանի անվ. թիվ 2 պոլիկլինիկայի համակարգող խորհրդի նիստերին՝ «պետության կողմից սոցիալապես անապահով անձանց անվճար բժշկական օգնության տրամադրում» թեմայով:

Հավելված 7
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ԾՃ պայմանագրի

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 75 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 36 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 16 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 11 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 64 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (*նշել*) Ազատ ժամանցի կազմակերպում<br>Լվացքի տրամադրման ծառայություն | 43<br>2 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մխիթարյան ______________________

«_09_» __10__2023 թ